ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

# ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

## Ընդդեմ «168 ժամ» թերթի՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության դիմումի վերաբերյալ

**Դիտորդ մարմնի կազմը՝**

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել ՀՀ արտաքին գործերի նախարարության մամուլի խոսնակ Աննա Նաղդալյանը՝ ընդդեմ «168 ժամ» թերթի՝ 168.am կայքում 2019թ. մայիսի 25-ին հրապարակված «Ինչի՞ց է վատացել արտգործնախարարի ինքնազգացողությունը» (https://bit.ly/2FpQ0vv) վերնագրով նյութի:

Ըստ բողոքի՝ հրապարակումը (մեջբերում ենք) «ոչ այլ ինչ է, քան (...) բացահայտ սուտ տեղեկատվություն և ՀՀ միջազգային հեղինակությունը վնասելու ակնհայտ փորձ: Նույն ժամանակահատվածում մի քանի այլ հոդվածներով 168.am-ն իր լսարանին իրազեկում է ԱԳ նախարարի կողմից արտերկրում հանդիպումների մասին, այնուհանդերձ չի վարանում պնդելու Երևանում սեփական աշխատասենյակում գտնվելիս առողջական խնդիր ունենալու մասին, այն համեմելով արտաքին քաղաքական անհիմն կոնտեքստով» (մեջբերման ավարտը):

## Ա. ՓԱՍՏԵՐ

1. «168 ժամ» թերթի 168.am կայքում 2019թ. մայիսի 25-ին հրապարակվել է «Ինչի՞ց է վատացել արտգործնախարարի ինքնազգացողությունը» (https://bit.ly/2FpQ0vv), նյութը, որում նշված է (մեջբերում ենք). «168 Ժամի» խիստ հավաստի տեղեկություններով՝ անցյալ շաբաթ աշխատավայրում կտրուկ վատացել է ՀՀ արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանի առողջական վիճակը, ԱԳՆ աշխատակազմը ստիպված է շտապ օգնություն կանչել: Նախարարություն ժամանած բժիշկներն անհրաժեշտ օգնություն են ցուցաբերել. պարզվում է՝ կտրուկ բարձրացել էր նախարարի արյան զարկերակային ճնշումը: ԱԳՆ մեր աղբյուրները պնդում են, որ մինչ այդ Զոհրաբ Մնացականյանն իր իսկ նախաձեռնությամբ

բավականին ծանր հեռախոսազրույց է ունեցել Ռուսաստանի Դաշնության իր պաշտոնակցի՝ Սերգեյ Լավրովի հետ: Այլ մանրամասներ հեռախոսազրույցի բովանդակության մասին այս պահին հայտնել չենք կարող, բայց ակնհայտ է, որ խոսակցությունը նախարարի համար ցանկալի ընթացք չի ունեցել» (մեջբերման ավարտը):

2. Նույն օրը, հրապարակումից անմիջապես հետո, ՀՀ արտաքին գործերի նախարարության մամուլի խոսնակ Աննա Նաղդալյանը, իր փոխանցմամբ, Ֆեյսբուքի միջոցով կապվել է թերթի գլխավոր խմբագիր Սաթիկ Սեյրանյանի հետ՝ պարզաբանելով, որ նյութում նշված ժամանակահատվածում արտգործնախարարը գտնվել է Բրյուսելում: Սակայն լրատվամիջոցն իր տեղեկությունը չի հերքել:

3. Դիտորդ մարմինը 2019թ. մայիսի 26-ին ստացել է ՀՀ արտաքին գործերի նախարարության մամուլի խոսնակ Աննա Նաղդալյանի բողոքն ընդդեմ հիշյալ հրապարակման եւ հունիսի 4-ին, առաջնորդվելով իր աշխատակարգով, նամակով դիմել է «168 ժամ» թերթի գլխավոր խմբագիր Սաթիկ Սեյրանյանին («168 ժամ» թերթը ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած եւ «Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը» ստորագրած ԶԼՄ-ներից է):

4. 2019թ. հունիսի 10-ին Դիտորդ մարմինն ստացել է Սաթիկ Սեյրանյանի պատասխանը, որում ներկայացված են խմբագրության պարզաբանումները հրապարկման եւ բողոքի վերաբերյալ: Ահա մի քանի մեջբերում այդ պատասխանից.

ա) «(...) Կանոնակարգի (խոսքը «Հայատանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրին» է վերաբերում - *ԴՄ*) 1.1 և 1.4 կետերի համադրությունը . 1.1 կետը սահմանում է «մինչև հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել և չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ», իսկ 1.4 կետով ամրագրվում է վերլուծություններ և մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի և հավաստի տեղեկությունների վրա։ Այս առնչությամբ հարկ է հիշեցնել, որ լրատվամիջոցը հրապարակումը կատարելիս ունեցել է խիստ հավաստի աղբյուր։ Լրատվամիջոցն ունի նաև այդ աղբյուրը չբացահայտելու իրավունք, ինչից և օգտվում ենք։

բ) «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը վերաբերում է հերքման և պատասխանի իրավունքին, ըստ որի՝ անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքելու իր իրավունքները

խախտող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ (...): Շեշտենք, որ «168 Ժամին» պաշտոնապես նման պահանջ չի ներկայացվել: Այլ խնդիր է՝ եթե դրվեր նման պահանջ, ինչպիսի՞ն կլիներ լրատվամիջոցի պատասխանը, ի՞նչ նոր փաստեր կհամադրվեին»:

գ) «(...) Մեր հրապարակումը հրապարակային քաղաքականությամբ զբաղվող քաղաքական գործչի մասին է (...) և՛ ՀՀ Սահմանադրական դատարանը, և՛ ՄԻԵԴ-ը նշում են, որ քաղաքական գործիչը պետք է հանդուրժող լինի իր հասցեին հնչող քննադատության նկատմամբ, իսկ այս հրապարակման մեջ նույնիսկ որևէ քննադատության մասին խոսք անգամ չկա»:

դ) «(...) Ենթադրենք, թե մեր հրապարկման մեջ նշված «անցած շաբաթ» ժամանակահատվածում նախարարը Երևանում չի եղել, բայց ակնհայտ է, որ երբ չկա ստույգ նշված ամսաթիվ, թերևս հնարավոր են ժամկետային տատանումներ, այսինքն՝ միգուցե նախարարի առողջական վիճակը ոչ թե հրապարակմանը նախորդած 7 օրերի ընթացքում է վատացել, այլ 10: Այդ հարցը մենք չենք վիճարկում, միգուցե և ժամկետների մեջ խոսնակի ընկալմամբ սխալվել ենք, բայց այս կամ այն դեպքում դա որևէ էական նշանակություն ունենալ չի կարող: Ավելին, ժամկետները վերջնական ճշգրտման փուլում են, և հրապարակման ենթակա են»:

ե) «(...) Ինչ վերաբերում է բողոքի մեջ տեղ գտած այն պնդմանը, թե մեզ տեղեկատվության հրապարակման օրը առավոտյան՝ ժամը 9.00-ին ֆեյսբուքյան կապի միջոցով տեղեկացրել են, որ «անցած շաբաթ» նախարարը երկրում չի եղել, պետք է արձանագրենք, որ սա ևս որևէ հետևանք չի կարող ենթադրել: Նախ, զարմանալի է, որ խոսնակը պաշտոնական պատասխանը և ֆեյսբուքյան կապի միջոցով գրագրությունը չի տարբերում միմյանցից: Այն դեպքում, երբ որևէ հարցման պարագայում այդ և մյուս գերատեսչությունները նույնիսկ տարրական հարցերի պարագայում գրավոր և պաշտոնական հարցում են պահանջում լրատվամիջոցներից»:

## Բ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. **«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք**

Հոդված 5. Տեղեկատվության աղբյուրների պաշտպանությունը

1. Լրատվական գործունեություն իրականացնողները եւ լրագրողները պարտավոր չեն բացահայտել տեղեկատվության աղբյուրը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով

նախատեսված դեպքերի:

II. **Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագիր**

1. Ճշգրտություն և անկողմնակալություն

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

1.1. մինչև հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել և չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ,

1.2. հստակորեն ու լսարանի համար հասկանալի մատնանշել այն դեպքերը, երբ խմբագրությունը, ստանալով հանրային նշանակության տեղեկություններ, օգտագործել է բոլոր հնարավոր ողջամիտ միջոցները, սակայն չի կարողացել ճշտել փաստերը,

1.4. վերլուծություններ և մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի և հավաստի տեղեկությունների վրա:

6. Ազնվություն հանրության հետ հարաբերություններում

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

6.1. աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից,

6.2. պատրաստակամ լինել հանդիպելու այն անձանց կամ կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք իրենց վիրավորված կամ զրպարտված են համարում կոնկրետ հրապարակմամբ, և պատասխանի հնարավորություն ընձեռելու բոլոր նրանց, ում հասցեին քննադատություն կամ մեղադրանքներ են եղել հրապարակումներում:

## Գ. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**1.** Ըստ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի, լրատվամիջոցը կարող է հիմնվել անանուն աղբյուրին եւ չբացահայտել այն, սակայն ըստ «Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի» (հետագա տեքստում՝ Կանոնագիր) 1.1 կետի՝ նաեւ պարտավոր է «մինչև հրապարակումը ստուգել ցանկացած

աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը», ինչը 168.am-ը չի արել: Համենայն դեպս՝ Դիտորդ մարմնին ուղարկված պատասխանում ոչ մի խոսք չկա այլ աղբյուրից տեղեկությունը ճշտելու, կամ ԱԳՆ-ից մեկնաբանություն ստանալու փորձերի մասին: Այսպիսով խախտվել է լրագրողական էթիկայի բազային սկզբունքներից մեկը:

**2.** Դիտորդ մարմինն ընդունում է, որ տեղեկությունը կարող էր հանրային նշանակություն ունենալ, քանի որ վերաբերում էր հանրային դեմքի, սակայն, միաժամանակ, հաստատակամ պնդում է, որ անգամ **«խիստ հավաստի աղբյուր»** ունենալու դեպքում հարկ է ստուգել տեղեկությունը, իսկ եթե դա չի հաջողվել, ապա առաջնորդվել Կանոնագրի 1.2 կետի պահանջներով եւ ոչ թե «1.1 եւ 1.4 կետերի համադրությամբ», ինչպես պնդել է իր պարզաբանման մեջ թերթի գլխավոր խմբագիրը: Քանի որ հրապարակումը կրում է զուտ տեղեկատվական բնույթ եւ դրանում վերլուծության չկա, ուստի Կանոնագրի 1.4 կետը կիրառելի չէ: Այնինչ Կանոնագրի 1.2 կետից բխող պարտավորությունները 168.am-ը նույնպես չի կատարել:

**3.** Եթե լրատվամիջոցի «խիստ հավաստի աղբյուրը» գիտեր երկու նախարարների զրույցի մանրամասները, ապա խմբագրությունը, վստահաբար, կարող էր նրանից ճշտել ու ընթերցողներին հայտնել նաեւ այդ զրույցի և դրան հաջորդած իրադարձության օրն ու ժամը: Այսպիսով, առավել պրոֆեսիոնալ գործելու դեպքում, 168.am-ը կներկայացներ ենթադրյալ հեռախոսազրույցին եւ դրա հետ կապված այլ հանգամանքներին վերաբերող ամբողջական տեղեկություններ, որոնք հանրային հետաքրքրություն են ներկայացնում: Դա նաեւ բերված փաստերի իսկությունը ստուգելու ավելի մեծ հնարավորություն կտար:

**4.** ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինն ընդունում է թերթի եւ կայքի գլխավոր խմբագիր Սաթիկ Մեյրանյանի այն պարզաբանումը, որ ԱԳՆ մամուլի խոսնակն իրենց պաշտոնապես չի դիմել հերքման կամ պատասխանի պահանջով:

**5.** ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը հորդորում է ԱԳՆ մամուլի խոսնակին ու մյուս պետական մարմինների համապատասխան կառույցներին՝ լրատվամիջոցներից հերքում կամ պատասխան պահանջել պաշտոնական գրագրությամբ եւ ոչ թե ֆեյսբուքի մեսենջերի կամ այլ սոցիալական ցանցերի միջոցով: Լրատվամիջոցներն իրավունք ունեն այդպիսի հաղորդակցությունը չդիտարկել որպես պաշտոնական հերքում կամ պատասխան:

***Ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի***
***2019թ. հունիսի 11-ի նիստում,***

*Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝*

**Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**, մամուլի փորձագետ

**Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ**, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

**Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**, «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվական հաղորդման գլխավոր խմբագիր, «Newmag» ամսագրի գլխավոր խմբագիր

**Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ**, Երևանի մամուլի ակումբի նախագահ

**Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ**, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

**Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ**, Media.am-ի պրոդյուսեր

**Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ**, «Կոնցեռն Դիալոգ» փաստաբանական ընկերության հանրային կապերի պատասխանատու

*ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 46-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում:*